ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2016 թվականի **թիվ 23** քաղ. Մոսկվա

«Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 009/2011) փոփոխությունները գործողության մեջ դնելու կարգի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 11-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Սահմանել, որ՝

«Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 009/2011) սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը

հաստատելու մասին փաստաթղթերը, որոնք ընդունվել են նախքան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի ««Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (ՄՄ ՏԿ 009/2011)» թիվ 91 որոշումն ուժի մեջ մտնելը, վավեր են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը.

«Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 009/2011) սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը հաստատելու մասին փաստաթղթերը, որոնք ընդունվել են նախքան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի ««Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (ՄՄ ՏԿ 009/2011)» թիվ 91 որոշումն ուժի մեջ մտնելը և չեն պարունակում դրանց գործողության ժամկետի ավարտի ամսաթվի նշում, գործում են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը.

2. Սույն Որոշման 1-ին կետում նշված՝ համապատասխանության հաստատման վերաբերյալ փաստաթղթերի գործողության ժամանակահատվածում արտադրված և (կամ) շրջանառության մեջ բաց թողնված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է դրա պիտանիության ժամկետի ընթացքում:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան